

Թունավորումներ

Թունավորումներ են կոչվում կենդանիների այն հիվանդությունները, որոնք պայմանավորված են թունաքիմիկատների (գյուղատնտեսության և շինարարության մեջ օգտագործվող), արդյունաբերության թունավոր մնացորդների և թունավոր հատկությամբ օժտված կերերի օրգանիզմ թափանցելով:

Կենդանիները կարող են թունավորվել.

- միջավայրից (օդ, ջուր, հող, բույսեր),
- կերից,
- դեղանյութերից,
- թունաքիմիկատներից և այլն:

Թունավորման պատճառներն են`

1. Մսուրային պահվածքի ժամանակ կենդանիների կերակրումը փչացած, նեխած, բորբոսնած կերերով:
2. Երբ կենդանիները լիզում են պատերից կամ տարբեր առարկաներից իրենց համով կերակրի աղ հիշեցնող թունավոր կենցաղային ներկեր:
3. Երբ ֆերմայում` կենդանիներին մոտ, դնում են թունաքիմիկատներ, պարարտանյութեր:
4. Գարնանը, երբ կենդանիները դուրս են գալիս արոտ և ուտում են թունավոր խոտեր:
5. Ախտահանիչների ոչ ճիշտ օգտագործումից:
6. Կարող են ոչ ճիշտ ներարկումների հետևանք դառնալ (ձեր կամ անասնաբույժի մեղքով):

Կլինիկական նշանները.

Կախված թունավորման պատճառից` կարող են նկատվել տարբեր նշաններ.

⇒ **ստամոքսի և աղիքների աշխատանքի խանգարում** (որովայնի պատի ցավազգացություն, փսխում, լուծ):

Այս նշանները նկատվում են.

- ծանր մետաղների աղերով (սնդիկ, կապար և այլն),
- որոշ թունավոր բույսերով (գորտնուկ, ընձախոտ) թունավորվելիս:

⇒ **դողերոցքի և ջղաձգումների նոպաներ**, շարժման կոորդինացիայի խանգարումներ, փքանք, տեսանելի լորձաթաղանթների կապտություն, պարեզներ:

Այս նշանները նկատվում են.

- նիտրիտներով, նիտրատներով (պարարտանյութերով),
- որոշ թունավոր բույսերով (դանձլամեր, մոլեխինդ, լյուպին, որում),
- ամոնիակային, ցիանիդային միացություններով,
- կապարով թունավորումների ժամանակ:

Թունավորում կասկածելու դեպքում պետք է հաշվի առնել հետևյալ բնորոշ տարրերակիչ նշանները.

1. Հիվանդությունը երևան է գալիս հանկարծակի, ունի արագ ընթացք, և կենդանին կարող է սատկել:
2. Տարբեր տեսակի և հասակի կենդանիներ հիվանդանում են միաժամանակ:
3. Բացառվում է շփման միջոցով տարածվելու հնարավորությունը:
4. Գաղտի շրջանը կարճատև է:
5. Թունավորումների մեծ մասի ժամանակ կենդանիների մարմնի ջերմաստիճանը լինում է նորմալ կամ նորմայից ցածր:

Բուժում. Թունավորումների բուժումը երկարատև և բարդ գործընթաց է: Այդ պատճառով կասկածների դեպքում անհապաղ դիմեք անասնաբույժին: Ժամանակին անասնաբույժին դիմելու դեպքում կբարձրանա բուժման արդյունավետությունը, ինչպես նաև կնվազի անասունի սատկելու հավանականությունը:

Ցանակացած թունավորման դեպքում, մինչև թունավորման պատճառը և բնույթը պարզելը, պետք է սկսել **առաջին բուժօգնությունից:**

Առաջին բուժօգնությունը կարող էք իրականացնել 'Դուք' կիրառելով հետևյալ արդյունավետ մեթոդներից որևէ մեկը.

- 0,5լ ձեթը խառնել 2-3լ հում տաք կաթին և խմեցնել կենդանուն:
- Եթե ձեռքի տակ կա կոքսաձուխ կամ սովորական փայտածուխ, մանրացնել և մինչև 500 գրամ փայտածուխը խառնել 1,5-2լ տաք ջրին կամ կաթին ու խմեցնել կենդանուն:
- Վերցնել մինչև 10 հատ ձվի սպիտակուց, թեթևակի հարել, ավելացնել 1լ տաք ջրին կամ կաթին և խմեցնել:

Առաջին բուժօգնությունից հետո անհապաղ դիմեք անասնաբույժին: Թույնի բնույթը պարզելուց հետո անասնաբույժը կձեռնարկի կոմպլեքս բուժում, մասնավորապես.

- կենդանու ստամոքսի լվացում,
- օրգանիզմի կողմից թույների ներծծումը կանխարգելող թերապևտիկ բուժում,
- օրգանիզմից թույների հեռացումը խթանող թերապևտիկ բուժում,
- կենդանու դիմադրողականությունը բարձրացնող թերապևտիկ բուժում:

Կանխարգելումը. Ձեր ֆերմայում թունավորումներից խուսափելու համար կարող էք ձեռնարկել մի շարք քայլեր.

- *կենդանիների ճիշտ կերակրում.* մի տվեք բորբոսնած, փտած, նեխած կերեր, թթված կաթնամթերք,
- *կերերի պաշտպանում սնկային հիվանդություններից.* խոտը և անասնակերը պահեք չոր տեղում, այլապես այն կարող է բորբոսնել և թունավորման պատճառ դառնալ,

- կենդանիներից հեռու պահեք թունաքիմիկատները և պարարտանյութերը,
- կիրառեք անասունների համար անվտանգ ախտահանիչներ. ախտահանիչ ընտրելիս խորհրդակցեք անասնաբույժի հետ,
- անասնագուրը ախտահանեք կենդանիների բացակայության ժամանակ,
- խուսափեք անհարկի դեղամիջոցների օգտագործումից, մինչ որևէ բուժում իրականացնելը խորհրդակցեք անասնաբույժի հետ:

Արգելվում է.

- եթե կենդանին թունավորվել է թթվով (թթված կաթնամթերքով), ապա արգելվում է տալ թթվային նյութեր (թան, քացախ),
- եթե հիմքով (հանգած կիր, ակալոիդներ), ապա արգելվում է տալ հիմնային նյութեր (կերակրի սոդա և այլն),
- հերբիցիտներով թունավորված կենդանիների միսը արգելվում է օգտագործել սննդի մեջ:
- բոլոր տեսակի թունավորումների դեպքում կաթն արգելվում է օգտագործել:

Ամոնիակային սելիտրայով (պարարտանյութ), թունավոր կերերով թունավորվելիս, սպանդի ենթարկած կենդանիների միսը թույլատրվում է օգտագործել միայն եփելուց հետո: